

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Շենքերի ոլորտի էներգաարդյունավետությունը ՄԱՁԾ և ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում

ք.Երևան, օգոստոսի 31, 2017թ. – Հայաստանի քաղաքային տնտեսությունում ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների խոշորագույն աղբյուրներից մեկը շենքերն են. ՋԳ ընդհանուր արտանետումների 24 տոկոսը գոյանում է շենքերում էներգասպառման արդյունքում: Միևնույն ժամանակ շենքերում էներգախնայողության ներուժը զգալի է և դրա իրացումը հնարավոր է ապահովել ժամանակակից արդյունավետ տեխնոլոգիաների կիրառման և գործելաձևի ներդրման միջոցով:

Կլիմայի կանաչ հիմնադրամի (ԿԿՀ) կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի (ՄԱՁԾ) կողմից իրականացվող «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագիրը միտված է նպաստելու ՋԳ արտանետումների նվազեցմանը Հայաստանում գոյություն ունեցող շենքերի ֆոնդից: Նախատեսվում է ապահովել մոտ 50-60 տոկոս էներգախնայողություն շենքերի ջերմային մեկուսացման միջոցով:

Այսօր, «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան Մեծ» դահլիճում տեղի ունեցավ ծրագրի մեկնարկային աշխատաժողովը, որի ընթացքում ներկայացվեցին ծրագրի հիմնական նպատակները և նախատեսված միջոցառումները, ինչպես նաև էներգաարդյունավետության բարձրացման գծով շենքերի ոլորտում առկա միջազգային փորձը և նվաճումները:

Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱՁԾ մշտական ներկայացուցիչ Բրեդլի Բուգետտոն, ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը, Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կամո Արեյանը, ՄԱՁԾ քաղաքականության և ծրագրերի օժանդակության համար գլոբալ բնապահպանական ֆինանսական բյուրոյի գործադիր համակարգող Ադրիանա Դինուն ողջունեցին մեկնարկային աշխատաժողովի մասնակիցներին, ովքեր ներկայացնում էին մի շարք նախարարություններ և գործակալություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ, բանկային ոլորտը և մասնավոր հատվածը:

Միջոցառմանը ներկայացվեցին շենքերի ոլորտում էներգաարդյունավետության բարձրացմանը նպաստող և էներգախնայողությունը խթանող ՄԱՁԾ տարբեր ծրագրերի իրականացման փորձը, քաղված դասերը և հիմնական եզրակացությունները:

Այս ծրագիրը հասցեագրելու է ինչպես հասարակական, այնպես էլ բնակելի շենքերը, կենտրոնանալով շուկայի խոչընդոտների հաղթահարման միջոցով էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների կենսունակ բիզնես-մոդելի և բարենպաստ շուկայական միջավայրի ստեղծման վրա: Քաղաքականության և ֆինանսական ռիսկերի նվազեցման գործիքների համադրության և շուկայի առանցքային խաղացողների և շահառուների համար հասցեագրված ֆինանսական արտոնությունների միջոցով փորձ է արվելու հաղթահարել էներգաարդյունավետության միջոցառումների խոչընդոտները:

Որպես գլոբալ բնապահպանական նշանակության ծրագիր, այն ֆինանսավորվել է ԿԿՀ-ի կողմից, որը հանդես է գալիս որպես ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի կատարման ֆինանսական մեխանիզմ: Ծրագիրը ԿԿՀ-ի կողմից աշխարհում ֆինանսավորված 10-րդն է, իսկ եվրասիական տարածաշրջանում՝ առաջինը: Ծրագիրն իրականացվում է ազգային գործընկերների՝ ՀՀ բնապահպանության նախարարության, Երևանի քաղաքապետարանի և շահագրգիռ այլ կողմերի հետ համատեղ: Վեց տարի տևողությամբ այս ծրագրի համար ԿԿՀ-ը տրամադրել է 20 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհային միջոցներ:

Ծրագրի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար այցելեք հետևյալ կայքը՝ <http://nature-ic.am/en/projects/De-Risking-Investments-in-EE-Buildings/18>